

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԸ

Ռոզա Առաքելյան

ԵՊՀ Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասպիրանտ
aragelyan.roza@ysu.am,
ORCID - 0009-0006-1373-6393

Համառոտագիր: Արդարադատության միջազգային դատարանի հեղինակությունը և իրավասությունը վերջին տարիներին զգալի քննարկումների առարկա են դարձել, մասնավորապես՝ իր վճիռների կատարումն ապահովելու հարցում վերջինիս արդյունավետությունը: Միջազգային արդարադատության դատարանի վճիռների հարկադիր կատարման հստակ կառուցակարգերի բացակայությունը հանգեցրել է դրանց կատարման ձգձգման:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ սույն աշխատանքի նպատակն է Միջազգային արդարադատության դատարանի վճիռների կատարման միջազգային կառուցակարգերի հետազոտությունը, ինչի շրջանակներում համակարգորեն վերլուծվել են ՄԱԿ կանոնադրության 94-րդ հոդվածը, ինչպես նաև Գլխավոր ասամբլեայի և Գլխավոր քարտուղարի իրավասությունները վճիռների կատարման հարցում՝ որպես այլընտրանքային միջազգային կառուցակարգեր:

Թեև Արդարադատության միջազգային դատարանի վճիռների կատարման միջազգային կառուցակարգը նախատեսվում է ՄԱԿ-ի Կանոնադրության 94-րդ հոդվածով, այնուամենայնիվ, ելնելով նշյալ հոդվածի ձևակերպումներից, չի կարելի պնդել, որ միայն ՄԱԿ Անվտանգության խորհուրդն է օժտված միջազգային դատարանի վճիռն ի կատար ածելու բացառիկ լիազորություններով: ՄԱԿ կանոնադրության համաձայն՝ միջազգային դատարանի վճիռը կատարելու նպատակով Գլխավոր ասամբլեան կարող է ստեղծել օժանդակ մարմին, ինչպես նաև ընդունել բանաձևեր՝ ուղղված ԱՄԴ վճիռների կատարմանը: Բացի այդ, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը ևս պարտավոր է ապահովել դատարանի վճիռի կատարումը՝ համաձայն ՄԱԿ կանոնադրության 98-րդ և 99-րդ հոդվածների: Վերջինս իրավասու է Անվտանգության խորհրդի ուշադրությանը ներկայացնել ցանկացած հարց, որը, իր կարծիքով, կարող է սպառնալ միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը: Գլխավոր քարտուղարի դերը չպետք է անտեսվի, երբ խոսքը վերաբերում է Արդարադատության միջազգային դատարանի վճիռների կատարմանը:

Բանալի բառեր - Արդարադատության միջազգային դատարան; Անվտանգության խորհուրդ; Գլխավոր ասամբլեա; ՄԱԿ կանոնադրություն; վճիռ; ՄԱԿ գլխավոր քարտուղար; հայեցողական լիազորություններ:

1. Ներածություն

Միավորված ազգերի կազմակերպության (այսուհետ՝ ՄԱԿ) կանոնադրության հիման վրա, ի թիվս այլնի, ստեղծվեց նաև Արդարադատության միջազգային դատարանը՝ որպես ՄԱԿ-ի դատական մարմին:

Ինչպես վկայում է վերջինիս վճիռների և որոշումների բովանդակության և գործնական կիրառման ուսումնասիրությունը, դրանք ոչ միայն արդյունավետ լու-

ծում են միջպետական վեճերը, այլև զգալիորեն նպաստում են միջազգային իրավունքի գիտության զարգացմանը, մեկնաբանմանը և կիրառմանը:

Ասվածով հանդերձ, հարկադրված ենք արձանագրել, որ այս հարցում առկա են որոշակի թերություններ: Հատկապես վերջին տարիներին քննարկումների և նույնիսկ լուրջ քննադանության առարկա են դարձել ինչպես ՄԱԿ-ի միջազգային դատարանի վճիռների արդյունավետության, այնպես էլ դրանց կատարման հետ կապված հարցերը:

Քննադանությանը նպաստող պատճառներից, *Inter alia*, Միջազգային արդարադատության դատարանի վճիռների հարկադիր կատարումը երաշխավորող արդյունավետ կառուցակարգերի բացակայությունն է: Ավելին, կարող ենք արձանագրել, որ դրանց կատարման հետ կապված առաջացել է ձգնաժամային վիճակ, ընդ որում, մեր կարծիքով, դա հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ երկբևեռ աշխարհակարգի փլուզումից հետո դեռևս չի ձևավորվել նոր՝ իրապես հավասարակշռված միջազգային հարաբերությունների հենքի վրա գործող միջազգային իրավակարգ:

Գուցե այս հանգամանքով է պայմանավորված այն, որ վերջին տարիներին Արդարադատության միջազգային դատարան ներկայացվող դիմումների քանակը նվազել է: Եթե 1946-1995թթ. Ղատարանը ստանում էր միջինում տարեկան հինգ նոր գործ, ապա 1996-2023թթ. միջինում տարեկան ստացել է երկու գործ¹: Նման վիճակագրությունը վկայում է, որ պետությունների մոտ նվազել է այդ դատարանին դիմելու ցանկությունը, ինչը մտահոգության տեղիք է տալիս:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հողվածի նպատակն է Միջազգային արդարադատության դատարանի վճիռների կատարման միջազգային կառուցակարգերի հետազոտության հիման վրա համակարգորեն վերլուծել ՄԱԿ կանոնադրության 94-րդ հոդվածի միջազգային իրավական բովանդակությունը, ինչպես նաև Գլխավոր ասամբլեայի և Գլխավոր քարտուղարի իրավասությունները վճիռների կատարման հարցում որպես այլընտրանքային միջազգային կառուցակարգեր:

Հետազոտությունը կատարելիս օգտագործվել են պատմաիրավական, համեմատաիրավական, համակարգակառուցվածքային, ինչպես նաև ընդհանուր գիտական (դիալեկտիկական, համակարգային, դեդուկտիվ, ինդուկտիվ) ուսումնասիրության մեթոդներ:

2. ՄԱԿ կանոնադրության 94-րդ հոդվածի երկրորդ մասը՝ որպես Արդարադատության միջազգային դատարանի վճիռների կատարման հիմնական միջազգային կառուցակարգ

ՄԱԿ կանոնադրության (այսուհետ՝ Կանոնադրություն) 94-րդ հոդվածով նախատեսվում է միջազգային դատական վճիռներն ի կատար ածելու միջազգային կառուցակարգ: Նշված հոդվածի առաջին մասի համաձայն՝ «ՄԱԿ յուրաքանչյուր անդամ պարտավորվում է կատարել Միջազգային դատարանի վճիռներն այն գործերով, որոնց մասնակից է հանդիսանում»²: Նույն հոդվածի երկրորդ մասով նախատեսվում է. «Եթե գործի մասնակից կողմը թերանում է իրականացնել դատարանի կայացրած վճռով իր վրա դրված պարտականությունները, մյուս կողմը կարող է դիմել Անվտանգության խորհուրդ, որն անհրաժեշտ համարելու դեպքում կարող է հանձնարարականներ տալ կամ որոշել այն միջոցառումները, որոնց հարկավոր է

¹Տե՛ս Արդարադատության միջազգային դատարանի պաշտոնական կայքէջ, <https://www.icj-cij.org/annual-reports>, 11.11.2024.

² Տե՛ս Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրություն (ընդունվել է 1945թ. հունիսի 26-ին Սան Ֆրանցիսկոյում):

դիմել դատարանի վճիռն ի կատար ածելու համար»¹: Կանոնադրության 94-րդ հոդվածի 2-րդ մասի ձևակերպումները բազմաթիվ բանավեճերի և հակասությունների պատճառ են հանդիսացել՝ հատկապես կապված Արդարադատության միջազգային դատարանի (այսուհետ՝ ԱՄԴ) վճիռները կատարելու համար ԱԽ իրավասության և նրա տրամադրության տակ եղած միջոցների հետ:

Կանոնադրության 94-րդ հոդվածի 2-րդ մասի իրավաբանական բովանդակությունը վերլուծելու և դրա վերաբերյալ գնահատականներ տալու նպատակով՝ փորձենք ներկայացնել դրա զարգացման պատմաիրավական էվոլյուցիան: 1945թ. Սան Ֆրանցիսկոյում տեղի ունեցած համաժողովում՝ Երրորդ կոմիտեի նիստում, քննարկվել է առանց կատարման մնացած դատավճիռների քանակի աճից խուսափելու կարևորությունը, ինչը բնորոշ էր համաժողովի ժամանակ տիրող իրավիճակին:² Նորվեգիան, կարևորելով այս հանգամանքը, առաջարկել է Կանոնադրության մեջ սահմանել դրույթ՝ հետևյալ շարադրանքով. «Պատշաճ միջոցներով ապահովել պետությունների միջև վեճի վերաբերյալ ցանկացած վերջնական որոշման կատարումը, որը կայացվել է կամ Արդարադատության միջազգային մշտական դատարանի, կամ ցանկացած այլ տրիբունալի կողմից, որի իրավագործությունը տվյալ հարցով ընդունվել է վեճի կողմ հանդիսացող պետությունների կողմից»³: Անդամները հրաժարվել են ընդունել վերոգրյալ տարբերակը, սակայն Կուբայի առաջարկով պատրաստել են նորը, որը մոտ էր Նորվեգիայի ներկայացրած տարբերակին: Նոր առաջարկում օգտագործվել է ձևակերպում, որի տրամաբանությունը կրկնում էր Ազգերի լիգայի դաշնագրի 13-րդ հոդվածի 4-րդ մասը, այն է՝ «Լիգայի անդամները համաձայնում են բարեխղճորեն կատարել յուրաքանչյուր հանձնարարական կամ որոշում, որը կկայացվի»⁴: Այսպիսով՝ Կուբայի առաջարկը հետևյալն էր. «Դատարանի կողմից կայացված վճռով պետության վրա դրված պարտավորության չկատարման դեպքում ԱԽ-ն առաջարկություններ է անում կամ որոշում է կայացնում այն միջոցների վերաբերյալ, որոնք պետք է ձեռնարկվեն վճիռը կատարելու համար»⁵:

22-րդ նիստում IV/I կոմիտեն Կուբայի առաջարկում «պետք է» բառը, որը ուղղակիորեն մատնանշում էր պարտադիր լինելը, փոխարինել է «կարող է» բառով, որը ենթադրում էր հայեցողական լիազորություններ: Ըստ էության սա շեղում էր Սան Ֆրանցիսկոյի իրավաբանների խորհրդատվական կոմիտեի առաջարկից: Ավելին, որպեսզի երկինաստությունը բացառվի այն բանի առնչությամբ, որ ԱԽ-ն կարող է գործել իր հայեցողությամբ, նախադասությունը լրացվեց հետևյալ կերպ. «եթե նա այդ անհրաժեշտ համարի»⁶: Կանոնադրության 94-րդ հոդվածի վերջնական վերանայման հետևանքների վերաբերյալ Սան Ֆրանցիսկոյի իրավաբանների խորհրդատվական կոմիտեն մտահոգող արդիական հարցերից էր՝ արդյոք դա չի ազդի ԱՄԴ և ԱԽ անկախության վրա: Երկար քննարկումներից հետո կոմիտեի դիտարկումն այն էր, որ այս արտահայտության կիրառումը կարող է հանգեցնել դատարանի դիրքի թուլացմանը: Ի պատասխան այս փաստարկին՝ նշվել է, որ ԱԽ-ի կողմից ձեռնարկվող գործողություններն ավելի շատ թույլատրելի են, քան պար-

¹ Նույն տեղում:

² St'u 43th United Nations Conference on International Organisation, 1945, pp. 368-69, and 11th United Nations Conference on International Organisation, pp. 396-397

³ Նույն տեղում:

⁴ St'u Covenant of League of Nations (1919). <https://legal-tools.org/doc/106a5f/pdf>, 11.11.2024

⁵ St'u 13th United Nations Conference on International Organisation, 1945, p. 509

⁶ Ibid 386, 459: and 17th United Nations Conference on International Organisation, 1945, P. 97. St'u նաև Pomerance, M. The United States and the World Court as a "Supreme Court of the Nations". Dreams, illusions and disillusion, Martinus Nijhoff Publishers, 1996, p. 195.

տադիր, և որ վերոնշյալ ձևակերպման ավելացումը միայն ավելի հստակ է ընդգծում Աև-ի լիազորությունների հայեցողական բնույթը¹:

Այս մտավախության հաղթահարումը Ղատարանի ամբողջականությունը պաշտպանելու լավագույն միջոցն էր, սակայն այն տարբերակը, որն ի վերջո դարձավ 94-րդ հոդվածի երկրորդ մասը, ցույց է տալիս, որ վերջնականորեն ընդունված տեքստը, մասնավորապես՝ «որն անհրաժեշտ համարելու դեպքում» ձևակերպումը, Աև-ն կարող է օգտագործել որպես հայեցողական լիազորություն՝ վճիռը կատարելու կամ չկատարելու հարցում: Գտնում ենք, որ հենց այս հայեցողական լիազորությունն է ԱՄԴ վճիռները չկատարելու հիմնական պատճառներից մեկը:

Ասվածով հանդերձ, կարելի է պնդել, որ դեռևս Ազգերի լիգայի դաշնագրի 13-րդ հոդվածը, ըստ երևույթին, կոմիտեի առջև պարտականություն է առաջացնում ուսումնասիրել վեճի կողմերի վերաբերմունքն ու վարքագիծը դատարանի կայացրած վճիռի առնչությամբ, երբ օգտագործվում էր. «նման իրավարար վճիռը չկատարելու դեպքում խորհուրդը պետք է առաջարկի, թե ինչ քայլեր պետք է ձեռնարկվեն այն կյանքի կոչելու համար»²: Նշված Ղաշնագրի 13-րդ հոդվածի քննադատական վերծրությունից պարզ է դառնում, որ այն միայն խորհրդի վրա է դնում անհրաժեշտ խնդրի բեռը՝ հատկապես գործնական տեսանկյունից, քանի որ հարց է առաջանում ինչու պետք է խորհուրդը գործի տուժող կողմի անունից, երբ սովորական պայմաններում վճիռ կատարման պահանջ ունեցող կողմն է, որ պետք է դիմի կատարումն ապահովելու համար: Այս դրույթի անհրաժեշտությունն ակնհայտ դարձավ «Հունաստանն ընդեմ Բուլղարիայի» գործով³, երբ խորհուրդը չկարողացավ որևէ քայլ ձեռնարկել վճիռը կյանքի կոչելու համար՝ չնայած այն հանգամանքին, որ «պետք է» բառը առկա էր Ղաշնագրի 13-րդ հոդվածի 4-րդ մասում:

Ըստ էության, Լիգայի Ղաշնագրի 13-րդ հոդվածի 4-րդ մասի անհրաժեշտության արդյունքում է, որ ՄԱԿ-ի կանոնադրության 94 հոդվածի 2-րդ մասում մտահոգություններ են առաջացել «պետք է» բառը ներառելու վերաբերյալ, ինչը հանգեցրել է Աև-ին տրված գործողությունների ազատությանը նշված հոդվածում, որպեսզի վերջինիս թույլ տա դրսևորել պատշաճ նախաձեռնություն Ղատարանի վճիռ կատարումն ապահովելու համապատասխան միջոցների վերաբերյալ հանձնարարականներ տալու կամ որոշումներ ընդունելու հարցում, և նախատեսում է, որ եթե գործով որևէ կողմ չի կատարում վճիռը իրեն վերապահված պարտավորությունները, մյուս կողմը կարող է դիմել Աև-ին⁴: Հետևաբար հարկ է նշել, որ 94-րդ հոդվածն իր ձևակերպումներում ավելի ճշգրիտ է թվում, քան Ղաշնագրի 13-րդ հոդվածը, քանի որ այն վերաբերում է նրան, թե ով է պարտավոր կատարել վճիռը, և հետագայում ցույց է տվել, որ Աև-ին դիմելը չի նշանակում ինքնաշխատ վճիռների կատարման ապահովման կառուցակարգ ԱՄԴ համար՝ իր վճիռների կատարման կապակցությամբ: Այնուամենայնիվ, կարևոր է նշել, որ կարող է տրվել սահմանափակող մեկնաբանություն այն մասին, թե ով է իրականում «պահանջատեր», քանի որ, մեր տեսանկյունից, միայն դատական կարգով դիմում ներկայացրած կողմին է թույլատրվում վկայակոչել 94-րդ հոդվածը, այլ ոչ դատական վարույթում պատասխանող կողմին: Հետևաբար, պետք է հասկանալ, թե ինչ է նշանակում «պահանջատեր»:

¹ St'u 913 United Nations Conference on International Organisation, pp. 386, 459; 17 United Nations Conference on International Organisation, p. 97. This issue was also canvassed in the document: 12 United Nations Conference on International Organisation. P. 505.

² St'u Covenant of League of Nations (1919). <https://legal-tools.org/doc/106a5f/pdf>, 11.11.2024

³ St'u Succession of States in respect of matters other than treaties, Yearbook of the International Law Commission, 1970, vol. II, p. 139, https://legal.un.org/ilc/documentation/english/a_cn4_226.pdf, 11.11.2024

⁴ St'u A.S.Müller, D. Raic, and J.M. Thuranzky (eds) The International Court of Justice its future role after fifty years, Martinus Nijhoff Publishers, 1997, pp. 83-116

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է պնդել, որ այն դեպքերում, երբ պատասխանող կողմը հակընդդեմ հայց է ներկայացնում, պահանջատերը նաև դատարանի վճռով հանդես է գալիս՝ որպես պատասխանող կողմ, և երկու կողմերն էլ համապատասխանաբար «պահանջատեր» են, ուստիև կարող են վկայակոչել Կանոնադրության 94 հոդվածի 2-րդ մասը:

«Կամերունն ընդդեմ Նիգերիայի» գործով¹ ԱՄԴ-ն նշել է, քանի որ կան պահանջներ և հակընդդեմ հայցեր, այս դեպքում Կամերունը, չնայած դատարանի վճռի նկատմամբ պահանջատեր լինելուն, նաև դատարանի վճռով պատասխանող կողմ էր և, հետևաբար, պարտավոր էր դուրս բերել ցանկացած բնույթի իր բոլոր ուժերը Չադ լճից մինչև Բակասսի թերակղզին ընկած սահմանի երկայնքով գտնվող տարածքներից, մինչդեռ վերոնշյալ թերակղզին ԱՄԴ վճռով անցավ Կամերունի ինքնիշխանության տակ: Այսպիսով՝ երկու կողմերն էլ պարտավոր են կատարել վճիռը՝ ՄԱԿ-ի կանոնադրության 94-րդ հոդվածի համաձայն:

Դաշնագրի 13-րդ հոդվածի 4-րդ մասի և Կանոնադրության 94-րդ հոդվածի 2-րդ մասի միջև մյուս հիմնարար տարբերությունն այն է, որ Լիգայի խորհուրդը պարտավոր էր միայն «առաջարկել», բայց ոչ «որոշումներ կայացնել անհրաժեշտ քայլերի վերաբերյալ», որոնք պետք է ձեռնարկվեն վճռի կատարման համար, սակայն ինչ վերաբերում է ՄԱԿ-ի կանոնադրության 94-րդ հոդվածի 2-րդ մասի առնչությամբ Աև դիրքորոշմանը, ապա այն պարտավոր չէ հարկադիր կատարել ԱՄԴ վճիռները, սակայն հոդվածը Աև-ին իրավունք էր տալիս իր հայեցողությամբ առաջարկություններ անել կամ հանձնարարականներ ներկայացնել առ այն, թե ինչպես կատարել ԱՄԴ վճիռը: Բացի այդ, այն նաև Աև-ին իրավունք է վերապահում «որոշում կայացնել այն մասին, թե ինչ պետք է անի, որպեսզի համոզվի, որ Միջազգային դատարանի վճիռները կատարվում են»²:

Հաշվի առնելով Կանոնադրության 94-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթի հայեցողական բնույթը՝ անհրաժեշտ է քննարկել այն միջոցառումները, որոնք կարող են ձեռնարկվել Աև կողմից՝ ապահովելու համար Դատարանի որոշման կատարումը:

Հարկ է նշել, որ չկան սպառնիչ ցանկեր հնարավոր միջոցառումների վերաբերյալ, որոնք Աև-ն կարող է ձեռնարկել, ինչպես նախատեսված է միջազգային պարտավորությունների կատարման հարցի առնչությամբ ՄԱԿ-ի կանոնադրության VI, VII գլուխների դրույթներով և 41-րդ, 42-րդ հոդվածներով: Այնուամենայնիվ, չի կարելի նաև ասել, որ Աև-ն սահմանափակված է 94 հոդվածի 2-րդ մասի ուժով՝ հանձնարարականներ տալու կամ համապատասխան քայլեր ձեռնարկելու՝ ուղղված այն հարցերի վերաբերյալ կատարումն ապահովելուն, որոնց առնչությամբ վերջինս պետք է ցուցումներ տա (ինչպես նախատեսված է Կանոնադրությամբ) կամ կատարի գործողություններ, որոնք հիշեցնում են Կանոնադրության 41-րդ և 42-րդ հոդվածներում թվարկված միջոցները:

Այս փաստարկն ունի նաև մեկ այլ կողմ, այն է՝ համաձայն ճանաչված «կիրառելի ուժի» դոկտրինի՝ չկան խոչընդոտներ 94-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված անհրաժեշտ միջոցների ներդրման համար: Սա ենթադրում է, որ այն դեպքերում, երբ Աև-ն համարի, որ միջոցներն անհրաժեշտ են՝ հաշվի առնելով տվյալ իրավիճակի փաստական հանգամանքները, նա պարտավոր է գործել սահմանված կարգով: Դատարանը, օրինակ, Նամիբիայի գործով եզրակացության³ մեջ նշել է, որ բացի Աև-ին տրված լիազորություններից, որոնք թվարկված են VI, VII, VIII և XII

¹ St'u Report of the International Court of Justice (2002), para 314-316, <http://www.icj-cij.org/docket/index.php?p1=3&p2=3&k=52&case=94>, 11.11.2024

² W.M Reisman. Nullity and Revision: Review and Enforcement of International Judgments and Awards, Yale University Press 1971 pp. 704-709.

³ St'u Report of the International Court of Justice (1971) p. 16. <http://www.icj-cij.org/docketfiles/53/5597.pdf>, 11.11.2024

գլուխներում, Կանոնադրության 24-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ Աև-ն ունի հատուկ լիազորություն, ինչը ենթադրում է, որ դա թույլ է տալիս նրան ձեռնարկել ցանկացած միջոց, որը հնարավոր կդարձնի հասնել միջազգային խաղաղության և անվտանգության: Ի հաստատումն վերը նշված փաստարկի՝ խորհրդատվական եզրակացությունում Ղատարանը նշել է, որ «այնպիսի կառույցի իրավունքներն ու պարտականությունները, ինչպիսին ՄԱԿ-ն է, պետք է կախված լինեն դրա նպատակներից և գործառնություններից, որոնք նշված են կամ ենթադրվում են դրա հիմնադիր փաստաթղթերում և զարգացել են գործնականում»¹:

Այս կերպ, պայմանավորված տրված մեկնաբանությամբ, չկատարման ցանկացած դեպք ինքնին կարող է սպառնալիք հանդիսանալ միջազգային խաղաղության և անվտանգության համար, և դա հաստատող դրույթը կարելի է տեսնել Կանոնադրության 1-ին հոդվածի 1-ին մասում, 33-րդ հոդվածի 2-րդ մասում և 35-րդ հոդվածի առաջին մասում: Օրինակ, 1-ին հոդվածի հիմնական նպատակն է միջազգային խաղաղության և անվտանգության պահպանումը, այլ կերպ ասած՝ եթե խաղաղության պայմանները բացակայում են, ապա առաջանում է դրա պահպանման անհրաժեշտություն՝ հատկապես հաշվի առնելով, որ «միջազգային խաղաղության և անվտանգության պահպանում» արտահայտությունը օգտագործվում է Կանոնադրության գլուխների մեծ մասում: Ուստիև սխալ է պնդել, որ միջազգային խաղաղության խախտումը կարող է տեղի ունենալ միայն Կանոնադրության 2-րդ հոդվածի 4-րդ մասի խախտման դեպքում²: Յուրաքանչյուր վեճի կողմ կարող է դիմել վեճի խաղաղ կարգավորման միջոցով այն լուծելու համար՝ Կանոնադրության 33-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան: Երբ առկա է միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը սպառնալու հավանականություն, ապա 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՄԱԿ ցանկացած անդամի իրավունք է տրվում այդ մասին տեղեկացնել Անվտանգության խորհրդին կամ Գլխավոր ասամբլեային³: Աև իրավասությունը 94-րդ հոդվածի 2-րդ մասի շրջանակներում այն է, որ այն կախված չէ այլ դրույթների կարգավորումներից և դրանց կիրառելիությունից: Ըստ այդմ, Աև իրավասությունը և այն միջոցները, որոնք պետք է ձեռնարկվեն ԱՄԴ վճիռների կատարումն ապահովելու համար, պայմանավորված լինեն խորհրդի քննարկմանը ներկայացված յուրաքանչյուր կոնկրետ գործի փաստական հանգամանքներով:

Կանոնադրության 94-րդ հոդվածի 2-րդ մասը կիրառելիս Աև առջև կարող է խնդիր ծագի, թե ինչպես կարելի է տարանջատում անցկացնել ԱՄԴ վճիռը քննարկելու և ԱՄԴ վճիռը կատարելու միջև: Կարծում ենք՝ սույնի շրջանակներում կարող են առաջանալ հետևյալ հարցերը.

- արդյոք Աև-ն պետք է առաջնահերթություն տա պետությունների կողմից առաջ քաշված քաղաքական թե՞ իրավական փաստարկներին, կամ առաջնահերթ համարի ինչպես քաղաքական, այնպես էլ իրավական փաստարկները,

- արդյո՞ք Աև-ն պետք է կատարի ԱՄԴ վճիռն այն տեսքով, որով այն կայացվել է:

Վերոնշյալ հարցադրման էությունն այն է՝ արդյո՞ք Աև-ն իրավասու է վերանայելու ԱՄԴ վճիռները և կայացնելու նորը, որը տարբերվում է Ղատարանի կողմից ժամանակին կայացվածից, և արդյոք Աև-ն պետք է վճիռը թողնի ուժի մեջ և ձեռնարկի այլընտրանքային միջոցներ վճիռը կատարելու համար:

¹ St'u Report of the International Court of Justice, Report of Judgments, Advisory Opinions and Orders for Reparation for Injuries Suffered in the Service of The United Nations. Advisory Opinion of April 11th, 1949, p. 180. <http://www.icj.cij.org/docket/files/4/1835.pdf>, 11.11.2024

² St'u B. Simma, H. Mosler, A. Randelzhofer, Ch. Tomuschat, R. Wolfrum, A. Paulus, E. Chaitobu eds., The Charter of the United Nations: A COMMENTARY. New York: Oxford University Press, 2002, pp. 39-47

³ Ibid, pp. 608-615

Բացի վերոգրյալից՝ գործնականում Կանոնադրության 94-րդ հոդվածի 2-րդ մասը կիրառելիս ԱԽ-ի արդյունավետության համար խնդիր կարող է հանդիսանալ դրա մշտական անդամների ունեցած վետոյի իրավունքը, քանի որ վերջիններս սովորաբար վետո են դնում այն բանաձևի վրա, որին չեն աջակցում:

3. Գլխավոր ասամբլեայի իրավասությունը Արդարադատության միջազգային դատարանի վճիռների կատարման հարցում

Միջազգային հանրության կյանքին վերաբերող բարդագույն խնդիրների լուծման հարցում կարևորագույն դերակատարություն ունի ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան, որի կազմում ընդգրկված են բոլոր անդամ պետությունները: Հարկ է նշել, որ Կանոնադրության 94-րդ հոդվածի 2-րդ մասի շրջանակներում Գլխավոր ասամբլեան հատուկ իրավասություն չունի ապահովելու ԱՄԴ վճռի կատարումը, սակայն դրանից չի կարելի եզրակացնել, որ Կանոնադրությունը նվազեցնում է Գլխավոր ասամբլեայի իրավասությանը՝ ապահովելու միջազգային դատարանի վճիռների կատարումը:

Կարելի է պնդել, որ որոշակի հանգամանքներում Գլխավոր ասամբլեան կարող է պատասխանատվություն ստանձնել Կանոնադրության 10-րդ, 11-րդ, 14-րդ, 22-րդ և 35-րդ հոդվածների, այդ թվում նաև՝ Գլխավոր ասամբլեայի 377-րդ բանաձևի¹ ուժով ԱՄԴ վճռի կատարման ապահովման համար: Այսպիսով՝ Գլխավոր ասամբլեան օժտված է լիազորություններով՝ ապահովելու ԱՄԴ վճիռների կատարումը, քանի որ այդ լիազորությունները բխում են ՄԱԿ հիմնական նպատակներն ու սկզբունքները կատարելու իր պարտականությունից:

Այնուամենայնիվ, պետք է արձանագրել, որ չնայած Գլխավոր ասամբլեայի լայն իրավասությանը, կան դեպքեր, երբ վերջինիս իրավասությունը ինչ-որ առումով սահմանափակ է, ինչպես օրինակ՝ Կանոնադրության 2-րդ հոդվածի 7-րդ մասով և հատկապես Կանոնադրության 12-րդ հոդվածով: Գլխավոր ասամբլեայի բանաձևերը պարտադիր ուժ չունեն, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք վերաբերում են բյուջեի հաստատմանը և կատարված կամ կատարվելիք ծախսերի բաշխմանը կամ ՄԱԿ-ում նոր անդամների ընդունմանը: Սա նշանակում է, որ Գլխավոր ասամբլեայի առաջարկությունները շատ դեպքերում դառնում են «անատամ», քանի որ դրանք կրում են հանձնարարականի բնույթ, այլ ոչ՝ պարտադիր: Բացի այդ, Գլխավոր ասամբլեայի բանաձևը պարտադիր է դառնում միայն այն դեպքում, երբ ԱՄԴ վճռի կողմերը համաձայնում են իրենց համար պարտադիր ճանաչել Գլխավոր ասամբլեայի հանձնարարականները կամ բանաձևերը:

Չարմանալի չէ, որ Գլխավոր ասամբլեայի 1949թ. նյեմբերի 21-ի 289 բանաձևը², որը վերաբերում էր Սոմալիին, Լիբիային և Էրիթրեային, դարձել է պարտադիր միայն այն պատճառով, որ «մեծ տերությունները» Իտալական պայմանագրով համաձայնել էին բարեխղճորեն կատարել Գլխավոր ասամբլեայի՝ նախկին իտալական գաղութների տնօրինման վերաբերյալ հանձնարարականները: Հետևաբար, դժվար է ասել, թե արդյոք Գլխավոր ասամբլեան բանաձևի միջոցով կարող է պատասխանող կողմին պարտադրել կատարել ԱՄԴ վճռով վերջինիս պարտավորությունները:

Կանոնադրության 10-րդ, 11-րդ, 14-րդ հոդվածների և 377 բանաձևի համաձայն՝ Գլխավոր ասամբլեան լիազորված է իր հայեցողությամբ քննարկել, հետաքննել, հանձնարարականներ տալ և առաջարկել այն միջոցները, որոնք

¹ St'u Uniting for Peace, General Assembly Resolution 377 (V) of 3rd November, 1950, GAR (V) Supp. No. 20, p. 10

² St'u Questions of the disposal of the former Italian colonies, General Assembly Resolution 289 (IV) of 21st November, 1949

ակնկալվում է ձեռնարկել միջազգային պարտավորությունը կատարելու համար՝ ներառյալ ԱՄԴ վճիռը: Հարկ է նկատել, որ այն միջոցները, որոնք կարող են ձեռնարկվել Գլխավոր ասամբլեայի կողմից, կարող են լինել պարտադիր կամ կատարողական գործողությունների վերաբերյալ հանձնարարականների տեսքով, որոնք, ըստ էության, տարբերվում են բուն պարտադիր կամ կատարողական գործողությունների ֆիզիկական ակտից:

Արդարադատության միջազգային դատարանը իր «Որոշ ծախսերի վերաբերյալ ՄԱԿ խորհրդատական եզրակացությամբ»¹ հիմքեր ունեն հայտարարելու, որ այն միջոցները, որոնք Գլխավոր ասամբլեան կարող է ձեռնարկել, վերաբերում են ոչ միայն խաղաղությանը և անվտանգությանը, այլև այն հատուկ հարցերին, որոնք պետության կողմից փոխանցվել են Գլխավոր ասամբլեայի քննարկմանը՝ համաձայն ՄԱԿ-ի կանոնադրության 35-րդ հոդվածի²: Բացի այդ, ՄԱԿ-ի կանոնադրության 22-րդ հոդվածի համաձայն՝ Գլխավոր ասամբլեան կարող է ստեղծել այլ օժանդակ մարմիններ՝ Արդարադատության միջազգային դատարանի վճիռը չկատարելու դեպքում, ինչպես դա արվել է ՄԱԿ-ի Պաղեստինի հարցերով հատուկ կոմիտեի դեպքում (UNSCOP)³, որը ստեղծվել է պաղեստինցիների կենսապայմանները հետաքննելու համար:

Բացի այդ, Գլխավոր ասամբլեան ստեղծեց ՄԱԿ-ի դիտորդական խումբ Լիբանանում (UNOGIL)⁴: Այնուհետև ստեղծվեցին հանձնաժողովներ մանդատի տակ գտնվող տարածքը հսկելու, մանդատային լիազորություններից բխող տեղեկություններ ստանալու և ուսումնասիրելու համար, և ինչը տեղի ունեցավ նաև Աֆրիկայի հարավ-արևմուտքի միջազգային կարգավիճակի հետ կապված: Վերոգրյալից ելնելով՝ կարևորում ենք այն փաստը, որ ՄԱԿ-ին անդամակցությունը կարող է կասեցվել Գլխավոր ասամբլեայի կողմից՝ Աև-ի հանձնարարականով՝ Կանոնադրության 5-րդ և 6-րդ հոդվածների հիմքով, և դա նշանակում է, որ մինչև կասեցման ավարտը տվյալ պետությունը չի կարող իրականացնել իր իրավունքներն ու արտոնությունները որպես անդամ: ՄԱԿ-ի այն անդամը, որը պարբերաբար խախտում է Կանոնադրությամբ սահմանված սկզբունքները, կարող է Աև հանձնարարականով Գլխավոր ասամբլեայի կողմից վտարվել կազմակերպությունից:

Հարկ է նշել, որ Գլխավոր ասամբլեայի հայեցողական լիազորությունների մի մասն այն է, որ վերջինս կարող է նաև ԱՄԴ վճիռը չկատարելու կոնկրետ հարցը փոխանցել Աև-ին՝ վճռի կատարումն ապահովելու նպատակով տվյալ պետության դեմ համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար:

Ավելին՝ Գլխավոր ասամբլեան կարող է հանձնարարական տալ անդամ պետությանը՝ ապահովելու ԱՄԴ վճռի կատարումը՝ կիրառելով ցանկացած համապատասխան միջոց, մինչև հնարավոր լինի հասնել վճռի կատարմանը: Վճիռը չկատարող պետության ակտիվների վրա արգելանք դնելը և առևտրային գործունեության դադարեցումը կարող են կազմել Գլխավոր ասամբլեայի հանձնարարականի մի մասը, և 377 բանաձևի համաձայն, Գլխավոր ասամբլեան օգտագործեց իր հայեցողությունը՝ Չինաստանի ժողովրդավարական Հանրապետությանը Կորեական պատերազմին միջամտելու առնչությամբ՝ որպես «ազդեսոր պետություն» պիտակավորելու համար⁵, մինչդեռ ապրանքների մատակարարման տնտեսական էմբարգո

¹ St'u Certain Expenses of the United Nations, Article 17, paragraph 2, of the Charter. Advisory Opinion. ICJ. Rep. (1962), p. 151.

² St'u Certain Expenses of the United Nations, Article 17, paragraph 2, of the Charter. Advisory Opinion. ICJ. Rep. (1962), p. 164.

³ St'u Yearbook of the United Nations, 1946-1947, pp. 294-301.

⁴ St'u Yearbook of the United Nations, 1958, p. 38.

⁵ St'u Intervention of Central People's Government of the People's Republic of China in Korea, General Assembly Resolution 498 (V) of February 1951. Additional measures to be employed to meet the aggression in Korea, General Assembly Resolution 500 (V) of May 18, 1951,

սահմանելու վերաբերյալ հանձնարարական կար, որն ազդեց ինչպես Հյուսիսային Կորեայի, այնպես էլ Չինաստանի վրա:

Վերոգրյալի լույսի ներքո կարևորում ենք դիտարկել Գլխավոր ասամբլեայի կողմից վճիռների կատարման հարցում ձեռնարկվող միջոցների արդյունավետությունը:

Գոյություն ունի հանրային դիվանագիտության մի ձև, երբ դատարանի վճիռների չկատարման իրավիճակները ներկայացվում են Գլխավոր ասամբլեայի քննարկմանը: Գլխավոր ասամբլեայի կողմից բանաձևի ընդունումը հանրային դիվանագիտության ձև է, քանի որ այն ներկայացնում է ՄԱԿ անդամների դիրքորոշումը տվյալ հարցի վերաբերյալ, և վճիռը չկատարող պետությունը, ամենայն հավանականությամբ, պատրաստ կլինի առնվազն վերանայել ԱՄՆ վճռի կատարումը նշված բանաձևի ընդունումից հետո:

Բացի այդ, տեխնիկական տեսանկյունից, հավանաբար, ԱՄՆ վճռի կատարման հետ կապված կարող է առաջ գալ երկակի իշխանության ձև, քանի որ երբ վճիռը չկատարելու հարցը նախ քննարկվում է Գլխավոր ասամբլեայի կողմից, և ընդունվում է բանաձև, ապա ներկայացվում ԱԽ քննարկմանը, ԱԽ լրացուցիչ բանաձևը ցույց է տալիս վճիռը չկատարած պետությանը, որ երկու բանաձևերի ընդունմամբ չկատարելու հարցը լուրջ չափում է ձեռք բերել: Ակնհայտ է նաև, որ վերոնշյալ բանաձևը կարող է քաղաքական հիմք հանդիսանալ այլ պետությունների կողմից իրավաբանական բնույթի գործողությունների դիմելու համար:

Երբ Գլխավոր ասամբլեան նույն հարցի վերաբերյալ հաջորդիվ ընդունում է համապատասխան բանաձև կամ բանաձևեր, դա ինքնին կարող է դիտվել որպես ԱՄՆ վճիռների կատարման տեսակ, որն էլ կարող է հիմք հանդիսանալ կատարման անհրաժեշտության առաջացման համար: Բացի այդ, Գլխավոր ասամբլեայի բանաձևը կարող է ուժեղացնել ձնշումը վճիռը չկատարող պետության վրա¹, որպեսզի այն կատարի իր միջազգային պարտավորությունները՝ դատարանի վճռի համաձայն:

Այնուամենայնիվ, կարևոր է նկատի ունենալ, որ բանաձևի արդյունավետությունը քննադատաբար դիտարկելիս ամեն ինչ այնքան էլ դրական չէ, որքան կարող է թվալ, քանի որ այս բանաձևի ազդեցության բացասական մասի լավ օրինակ են Ամերիկայի Միացյալ Նահանգների կողմից Նիկարագուայի գործով ԱՄՆ վճիռը կատարելուց կանխամտածված հրաժարվելը և դրան հաջորդած ուժի կիրառումը Նիկարագուայի դեմ, ներառյալ ԱԽ-ի ծախողումը՝ կատարելու իր հիմնական պարտականությունը, որն է՝ վճռի կատարման ապահովումը:

Վերոնշյալ ծախողումը պայմանավորված է նրանով, որ ԱԽ մշտական անդամները միակարծիք չեն կատարման վերաբերյալ իրենց որոշումների հարցում: Հետևաբար, Միացյալ Նահանգներին չէր կարելի պարտավորեցնել կատարել ԱՄՆ վճիռը միայն այն պատճառով, որ Գլխավոր ասամբլեան հավասարապես չկարողացավ արդյունավետ գործողություններ ձեռնարկել՝ պարտավորեցնելու Միացյալ Նահանգներին կատարել իր Կանոնադրությամբ սահմանված միջազգային պարտավորությունները:

Այսպիսով՝ Գլխավոր ասամբլեայի արդյունավետության էությունը վերաբերում է իր գործառնություններին և բանաձևերին, որոնց հիման վրա այն կարող է հիմնել օժանդակ մարմիններ՝ նպաստելով հետաքննությունների անցկացմանը: Դիտորդական և վերահսկողական գործունեության կոմիտեներն ու հանձնաժողովները մեծա-

<https://documents.un.org/doc/resolution/gen/nr0/744/47/pdf/nr074447.pdf?token=6LO9briWpmFpFJGox9&fe=true>, 11.11.2024

¹ Տե՛ս **S. M. Schwebel**. The Effectiveness of International Decisions: Papers of a Conference of the American Society of International Law and the Proceedings of the Conference, Leyden, 1971, pp. 57-65.

պես կախված են շահագրգիռ պետությունների համաձայնությունից, և հենց այդ մասին է ասվում «Որոշ ծախսերի վերաբերյալ» ՄԱԿ խորհրդատվական եզրակացության¹ մեջ:

Կասկած չկա, որ Գլխավոր ասամբլեայի սահմանափակ արդյունավետության հետևանքով օբյեկտիվորեն անհրաժեշտ է դառնում նոր ուղիներ փնտրել՝ ԱՄԴ վճիռների կատարման միջազգային կառուցակարգերի արդյունավետության բարձրացման և այդ նպատակով նոր միջոցների ստեղծման համար, որոնք պետք է գտնվեն Միավորված ազգերի կազմակերպության շրջանակներում, որը կարող է իրականացվել նաև ՄԱԿ գլխավոր քարտուղարի միջոցով, քանի որ քարտուղարության գործողությունների մեծ մասն իրականացվում է հենց նրա միջոցով:

4. Գլխավոր քարտուղարի դերը Արդարադատության միջազգային դատարանի վճիռների կատարման միջազգային կառուցակարգերի հարցում

Անվտանգության խորհուրդը կարող է թույլատրել ցանկացած գործողություն, ինչպես նաև կիրառել մի շարք պատժամիջոցներ՝ ԱՄԴ վճռի կատարումն ապահովելու համար, իսկ Գլխավոր ասամբլեան համապատասխանաբար կարող է օգտագործել ցանկացած այլ հանձնարարական, որի միջոց կարող է ցանկացած կողմին պարտավորեցնել կատարել ԱՄԴ վճիռը: Այնուամենայնիվ, Գլխավոր քարտուղարը ևս կարող է կատարել ԱՄԴ վճռի կատարումն ապահովելու պարտականությունը՝ հիմք ընդունելով միջազգային պարտավորությունների մասով իր «բարի ծառայությունների» գործառույթը, որը կարող է իրականացվել կամ ՄԱԿ-ի որևէ մարմնի թույլտվությամբ, կամ հենց Գլխավոր քարտուղարի նախաձեռնությամբ: Այս դեպքում Գլխավոր քարտուղարը հանդես է գալիս որպես օրենքով սահմանված պարտավորությունների կատարմանը հարկադրելու լիազորություններով օժտված վարչական մարմնի ղեկավար:

Գլխավոր քարտուղարի վերը նշված գործառույթը, ըստ էության, կարելի է բնութագրել՝ որպես վեճերի կարգավորման կառուցակարգ՝ հիմք ընդունելով 1899 և 1907 թվականների Հաագայի կոնվենցիաների համապատասխան դրույթները, որոնց համաձայն մինչև զենքին դիմելը պետությունները պետք է դիմեն, որքան հանգամանքները թույլ են տալիս, բարի ծառայությունների, ինչպես նաև մեկ կամ մի քանի բարեկամ տերությունների միջնորդության ինստիտուտներին, և որ բարեկամ տերությունները իրենց նախաձեռնությամբ կարող են տրամադրել բարի ծառայություններ կամ միջնորդություն անգամ ռազմական գործողությունների ընթացքում²: Սակայն Կանոնադրությունը չէր նախատեսում վերոգրյալի առնչությամբ դրույթ, բայց և՛ Սան Ֆրանցիսկոյի համաժողովը, և՛ նախապատրաստական հանձնաժողովը տարբեր հիմքերով ենթադրում էին, որ ՄԱԿ գլխավոր քարտուղարը պետք է կարևոր դեր կատարի ՄԱԿ անդամ պետություններին վերաբերող հարցերում: Այնուամենայնիվ, նրանք համաձայնության չեն եկել այն հարցում, թե ինչ աստիճանի և որքան կարևոր է այն դերը, որը նա պետք է ստանձնի³: Նման իրավիճակ արդեն նախատեսվել և հաշվի էր առնվել ՄԱԿ նախապատրաստական հանձնաժողովի 1945 թվականի զեկույցում, որում ասվում էր հետևյալը. «Գլխավոր քարտուղարը կարող է կարևոր դեր ունենալ որպես միջնորդ և ոչ պաշտոնական խորհրդատու շատ կառավարությունների համար, և, անկասկած, ժամանակ առ

¹ St'u International Court of Justice, Report, 1962, p. 165, <http://www.icj-cij.org/docket/files/49/5259.pdf>, 11.11.2024

² St'u Article 9 of both 1899 and 1907, Hague Conventions, <https://guide-humanitarian-law.org/content/article/3/the-hague-conventions-of-1899-and-1907/>, 11.11.2024

³ St'u L. Cordenkar. The UN Secretary General and the Maintenance of Peace, Columbia University Press, 1987, p. 120.

ժամանակ նրան կդիմեն»¹: Ավելին, Կանոնադրության 99-րդ հոդվածի համաձայն՝ նրան տրվել է միանգամայն հատուկ լիազորություն, մասնավորապես՝ նա իրավասու է Անվտանգության խորհրդի ուշադրությանը ներկայացնել ցանկացած հարց (և ոչ միայն ցանկացած վեճ կամ իրավիճակ), որը, իր կարծիքով, կարող է սպառնալ միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը: Անհնար է կանխատեսել, թե ինչպես կկիրառվի այս հոդվածը ԱՄԴ վճռի կատարման ապահովման հարցում, բայց այն պատասխանատվությունը, որը նա դնում է գլխավոր քարտուղարի վրա, նրանից կպահանջի քաղաքական դատողության, փաստերի օբյեկտիվ համադրության և բարեխղճության բարձրագույն որակների դրսևորում:

«Բարի ծառայություններ» եզրույթը կարող է դիտարկվել որպես ճկուն գործիք, քանի որ այն տեսականորեն կարող է նշանակել «քիչ» կամ «շատ», թերևս իրականում Չլխավոր քարտուղարի բարի ծառայությունների բնույթն ու շրջանակը չեն կարող հստակ սահմանվել: ԱՄԴ վճիռների կատարման ապահովումը պետք է լինի ՄԱԿ գլխավոր քարտուղարի պարտականությունը, այդ իսկ պատճառով էլ նրա դերը գործի հետդատական փուլի նկատմամբ չի կարող անտեսվել: Այնուամենայնիվ, պետք է հասկանալ, որ հեղինակների մեծ մասը, որոնք ուսումնասիրել են ԱՄԴ վճիռները, դրանց չկատարումը և կատարման բարդության հետ կապված խնդիրները, հաշվի չեն առել այս հարցի առնչությամբ Չլխավոր քարտուղարի քաղաքական գործառնություններն ու իշխանությունը: Ուստիև անհրաժեշտ է ԱՄԴ վճիռների կատարման գործընթացում Չլխավոր քարտուղարի դերը բաժանել երեք առանձին քաղադրատարրերի, որոնք են.

1) ընդհանուր քաղաքական գործառնությո՝ համաձայն ՄԱԿ-ի կանոնադրության 98-րդ և 99-րդ հոդվածների,

2) վճռի չկատարման հարցի վերաբերյալ դատարանի խորհրդատվական եզրակացության հարցման հնարավոր դերը,

3) Չլխավոր քարտուղարի դերը Չլխավոր քարտուղարի հավատարմագրային ֆոնդի շրջանակներում, որի միակ նպատակն է անհրաժեշտության դեպքում օգնել այդ պետություններին ԱՄԴ միջոցով վեճերի լուծման հարցում:

5. Եզրակացություն

Ելնելով 94-րդ հոդվածի 2-րդ մասի ձևակերպումներից՝ չի կարելի պնդել, որ միայն ՄԱԿ Անվտանգության խորհուրդն է օժտված միջազգային դատարանի վճիռն ի կատար ածելու բացառիկ լիազորություններով: Դա պայմանավորված է նրանով, որ դատարանի որոշումը չկատարելը ipso facto հավասարեցվում է ՄԱԿ Կանոնադրության խախտմանը: Բացի այդ, վեճի այն կողմը, որը գտնում է, որ Դատարանի վճիռը չի կատարվում, կարող է նաև դիմել ՄԱԿ Չլխավոր ասամբլեային՝ Կանոնադրության 10, 11, 14, 22 և 35 հոդվածների համաձայն, ինչպես նաև հիմք ընդունելով 377 բանաձևը, որը միջազգային իրավունքի դոկտրինում հայտնի է որպես «Միասնություն հանուն խաղաղության բանաձև»:² Ուստիև, ՄԱԿ-ի կանոնադրության համաձայն միջազգային դատարանի վճիռը կատարելու նպատակով Չլխավոր ասամբլեան կարող է ստեղծել օժանդակ մարմին, եթե դա անհրաժեշտություն է տվյալ փաստական հանգամանքների համատեքստում Ասամբլեայի անունից այդ կերպ գործելու համար: Այս ընթացակարգի արդյունավետությունը, սակայն, ներկայացվում է բացասական լույսի ներքո, քանի որ հարց է առաջանում արդյոք դատական կոմիտեի ստեղծման դեպքում այն կվերանայի Արդարադատության միջազգային դատարանի լիազորությունները: Երկրորդ, քանի որ Չլխա-

¹ Տե՛ս Նոյն տեղում:

² Տե՛ս **O. Schacter** "The Enforcement of International Judicial and Arbitral Decision" 54 AJIL, 1960, pp 1-24.

վոր ասամբլեայի բանաձևերը դիտարկվում են որպես հանձնարարականներ, կարելի է պնդել, որ «Միասնություն հանուն խաղաղ կարգավորման» նախաձեռնության շրջանակներում նման հանձնարարականները կարող են այնքան համոզիչ լինել, որ պատասխանող պետությունը դրանք կատարի: Բացի այդ՝ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը ևս պարտավոր է ապահովել դատավճռի կատարումը՝ համաձայն ՄԱԿ կանոնադրության 98-րդ և 99-րդ հոդվածների: Վերջինս իրավասու է Անվտանգության խորհրդի ուշադրությանը ներկայացնել ցանկացած հարց, որը, իր կարծիքով, կարող է սպառնալ միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը: Գլխավոր քարտուղարի դերը չպետք է անտեսվի, երբ խոսքը վերաբերում է միջազգային իրավունքով վճիռների կատարմանը, ինչը ներառում է նաև Արդարադատության միջազգային դատարանի կողմից քննվող գործերի առնչությամբ վճիռները:

МЕЖДУНАРОДНЫЕ МЕХАНИЗМЫ ИСПОЛНЕНИЯ РЕШЕНИЙ МЕЖДУНАРОДНОГО СУДА

Роза Аракелян

*Аспирант кафедры европейского и международного права ЕГУ,
aragelyan.roza@ysu.am,
ORCID - 0009-0006-1373-6393*

Абстракт. Авторитет и компетенция Международного суда в последние годы стали предметом серьезных дискуссий, в частности, об эффективности последнего в обеспечении исполнения своих решений. Отсутствие четких механизмов принудительного исполнения решений Международного суда привело к кризису в их исполнении.

Принимая во внимание вышеизложенное, целью данной работы является исследование международных механизмов исполнения решений Международного суда, в рамках которых систематически анализировалась статья 94 Устава Организации Объединенных Наций, а также компетенция Генеральной Ассамблеи и генерального секретаря в отношении исполнения решений в качестве альтернативных международных механизмов:

Возможно, международный механизм исполнения решений Международного суда предусмотрен статьей 94 Устава ООН, однако, исходя из формулировок указанной статьи, нельзя утверждать, что только Совет Безопасности ООН наделен исключительными полномочиями по приведению в исполнение решения Международного суда. Согласно Уставу ООН, в целях исполнения решения Международного суда Генеральная Ассамблея может создавать вспомогательный орган, а также принимать резолюции, направленные на выполнение решений Международного Суда. Кроме того, генеральный секретарь ООН также обязан обеспечить исполнение приговора в соответствии со статьями 98 и 99 Устава ООН. Последний уполномочен доводить до сведения Совета Безопасности любые вопросы, которые, по его мнению, могут угрожать международному миру и безопасности. Роль генерального секретаря не следует упускать из виду, когда речь идет об исполнении решений Международного суда.

Ключевые слова - *Международный суд; Совет безопасности; Генеральная Ассамблея; Устав ООН; решение; генеральный секретарь ООН; дискреционные полномочия.*

INTERNATIONAL MECHANISMS FOR THE ENFORCEMENT OF JUDGEMENTS OF THE INTERNATIONAL COURT OF JUSTICE

Roza Arakelyan

*PhD student at the YSU Chair of European and International Law,
arakelyan.roza@ysu.am,
ORCID - 0009-0006-1373-6393*

Abstract. The authority and competence of the International Court of Justice has been the subject of considerable debate in recent years, in particular on the effectiveness of the Court in enforcing its judgements. The lack of clear mechanisms for enforcing the judgements of the International Court of Justice has led to a crisis in their enforcement.

Taking into account the above, the aim of this article is to investigate the international enforcement mechanisms of the International Court of Justice, through which comprehensively have been analysed Article 94 of the United Nations Charter, as well as the competence of the General Assembly and the Secretary-General with regard to enforcement as alternative international mechanisms.

Perhaps an international mechanism for the enforcement of ICJ judgements is provided for in Article 94 of the UN Charter, but based on the wording of the said Article, it cannot be argued that only the UN Security Council has the exclusive power to enforce an ICJ judgement. According to the UN Charter, in order to enforce the judgement of the International Court of Justice, the General Assembly may establish a subsidiary body, as well as adopt resolutions aimed at implementing the judgements of the International Court of Justice. In addition, the UN Secretary General is also obliged to enforce the judgement under Articles 98 and 99 of the UN Charter. The latter is authorised to bring to the attention of the Security Council any matter which, in his opinion, may threaten international peace and security. The role of the secretary-general should not be overlooked when it comes to the enforcement of judgements of the International Court of Justice.

Key words - *International Court of Justice; Security Council; General Assembly; UN Charter; judgement; UN Secretary-General; discretionary powers.*